

ՅՈՒՆԱՏԵՏՐ

ԲԱՐՁՐԱՎԿԱՆ ԵՒ ՆԻՒԹԱԿԱՆ ԻՐԱԿԱՆ

Օ 1.

ՊԱՐՑՈՎԱՆՈՒԹԵԱՆ ԵՅՑ

ԹԱԳԻՑՑՈՅՑ ՅԵՐԵ-ԳԵՐԵՎԵ

1912



ՏՊԱԳԾ. ԶԳԾ. ԳՈԳԾ. ԳՈԳԾ

ՀԱԽԱՔԱԾՈՅ Թ. ԱԶԱՅԵԱՆԻ ՔԱՅԼ

+

ՅԱԿԱՏԱՏՐ

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ՆԻՖՈԱԿԱՆ ԻՐԱԻԱՆՑ
ՈՒ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԵԱՆՑ

ԹԱՂԵՑԻՈՑ ՖԵՐԻԳԻԵՎԻ

1912



ՏՊԱԳՐ, ԶԳՈՆ ՓԱՓԱՁԵԱՆ

ՅՈՒՅԱՏԵՏՐ

ԲԱՐՁԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԵԱՆՑ

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Թաղ. կորհուրդը՝ Ազդ. Սահմանադրութեան համաձայն, ժողովրդեան ազատ քուէով լնարեալ, 4 տարուան պաշտօնավարութիւն ունենալու սահմանուած մարմին մը ըլլալով, պաշտօն ունի ի զիւմոյ ժողովրդեան և անոր վաստանութեամբը բանակարարել թաղին բոլոր այն գործերը, որ ըստ Սահմանադրութեան, ճշգուած և որոշուած են. այն է եկեղեցւոյ պայծառութեան և բարեղարդութեան և վարժարանին բարեկարգութեան և յառաջիմութեան հոգ տանիլ, հոկել և գործադրել, միջոցներ հայթայցթել ու տնօրինել, խչպէս և թաղեցւոց հոգեւոր և բարոյական ուրիշ ամէն կարգի պէտքերուն բարուոք կերպով կատարման եղանակները ճշգել ու անոնց անթերի գործադրութեան հոգածու ըլլալ:

Բնականաբար այս գործողութիւնները ուրիշ կերպով չեն կը նար գլուխ ելնել, բայց եթէ թաղեցի պատ. Ազդայնոց ամէն կերպով օժանդակութեամբ, քաջակերիչ վաստանութեամբ և զիսաւորաբար աւանդական բարեպաշտիկ նուիրատուութիւններով և այլ նուիրագործուած անհրաժեշտ ծախքերու սիրայօժար մասնակցութեամբ՝ ըստ հարկի և ըստ պարագայի:



Ուստի Խորհուրդս կարեւոր դատեց ի դիւրութիւն պատ . թաղեցւոյ ներկայ յայտագիրը տպել և ժողովրդեան բաժնել , որպէս զի յատակ և որոշ կերպով դիտնայ իր իրաւունքները ու պարտաւօրութիւնները առ Ազգն , առ Եկեղեցին , առ դպրոցն և ո՛ւն է ծախքերու վճարման հարկ եղած պարագային դժուարութիւն չկրէ սակարկութիւն ընելու կամ անծանօթին առջեւ գտնուելու :

Խորհուրդս վատահ է թէ պատ . թաղեցիները կը գնահատեն իր այս գործը և ամէն առթիւ կը յայտնեն իրենց վստահութիւնը և հաւանութիւնը սիրայօժար գործադրութեամբ յայտագրիս մէջ նշանակեալ պարտականութեանց :

ՖԷՐԻ-ԳԻՒՂԻ ԹԱՂ. ԿԱՄ ԵԿԵՂԵՑ. ԾՐՁԱՆԱԿ

Ֆէրի-Գիւղը՝ Ազգ . Կեդր . Վարչութեան կարգադրութեամբ ներայէն բաժնուելով , զատ թաղ կամ շրջանակ կը կազմէ , սահման ունենալով Հարպիյէի գէմի փուռին քովի փողոցէն մինչ Շիշի , ինչպէս նաեւ Նըշան-թաշը , Թէշիփիյէ ու Ախնէմ-Քէյօ :

Հետեւաբար ըստ օրինի պէտք է որ այդ կողմերու մեր բոլոր ազգայինները՝ իրենց բոլոր հոգեւոր և կրօնական գործերու մատակարարութիւնը , այսինքն Սլակրաութիւն , Պատկ , Յուղարկաւորութիւն , Հոգեհանգիստ . ինչպէս նաեւ կալուածական գործողութիւնները , այս Եկեղեցւոյն մէջ ընել տալու պարտական են և անոնց հասոյթները սուսնալ գիւղիս Եկեղեցւոյն և պաշտօնէից իրաւունքն է բայց հակառակ ասոր , կարդ մը ազգայիններ , անտեսելով Եկեղեցւոյ և պաշտօնէից իրաւ

ւունքները , կը նախընտրեն Բերա կամ ուրիշ տեղ կատարել տալ այդ արարողութիւնները : Իսկ թաղէս դուրս ուրիշ շրջանակներէ եղած զիմումներուն կամաւոր նըւէրներ կրնան տրուիլ , բայց պարտաւորիչ չէ , մանաւանդ Զատկին և Ծննդեան՝ թաղեցիք պարտաւորեն մեր Եկեղեցւոյ պաշտօնէից առաջ աւանդական նուէրները , փոխանակ հեռաւոր տեղերէ այցելողներուն :

ԹԱՂԵՑԻՔ ԵՒ ԹԱՂ. ԽՈՐՃՈՒՐԴ

Վերջին անգամ ըստ Սահմանադրութեան , թաղ . Խորհրդոյ ընտրութեան առթիւ . թաղիս ազնիւ հասարակութիւնը ըր վստահութեան քուէններով , կրկն անգամ նոյն ձեռքերուն յանձնեց Շլյուիի և Ֆէրի-Գիւղի Եկեղեցւոյ և ռպրոցի մատակարարութեան իննամքը : Խորհուրդս՝ որ արդէն նախապէս 4 տարուան շրջան մը բոլորած էր և այնու կազմած էր , ը զանազան փորձառութիւնը , այս անգամ կրկն պատ . հասարակութեան ազգային պարտաճանութեան վստահելով , ստանձնեց նոյն ծանր պաշտօնի պատասխանատութիւնը , յուսալով որ նորանոր աշխատութեամբ , թաղիս բարոյական կարութեանը համապատասխան բարձրութեան մը կարելի պիտի ըլլայ վերածել Եկեղեցւոյ բարեղարդութեան և առաւելապէս՝ կրթութեան գործը , զիմնալով որ ժողովրեան ալ զիխաւոր ու շաղրութեան նպատակալէար նոյնը պիտի ըլլայ : Այս առթիւ հարկ դատեց առանցին տեսրակի մը տպագրութեամբ , մէնչեւ ցարդ թաղեցի հասարակութեան անձանօթ մատցած Եկեղեցւոյ հետ ունեցած յարարերութեան պէտքերը պարզել և լուսաբանել , ինչպէս նաեւ

յայտնել թէ Թաղ. Խորհուրդո՛ անցեալ 4 տարուան շրջանին մէջ ի՞նչ ըրաւ և ի՞նչ պիտի ընէ նաեւ ներկայ շրջանիս մէջ :


Յայտնի է որ թաղիս Ս. Եկեղեցը 1861 թուականին կառուցուած է և մինչեւ 1898, թաղիս մատակարարական գործը՝ բնակչաց սակաւութեան պատճառաւ, Բերայի թաղին կցուած և մրացած էր, որով յանուն այս Եկեղեցւոյն աելի ունեցած նուերներն, կտակներն և ուրիշ յիշատակներն Բերայի թաղայն մատակարա, բութեան խառնուելով, ըստ մեծի մասին գործածուած, կորուած և վերջապէս որոշ և յայտնի արգիւնք մը և օգուտ մը ունեցած չն. այնպէս որ մեր օրերը իրոզութեան մը առջեւ գտնուելով, ահսանք թէ ո՛չ հասոյթ մր, ո՛չ կալուած մը և ո՛չ ալ հաստատուն եկամուտ մը կայ, որմէ Ֆէրի-Դիւզի թաղը նիւթապէս կարենայ օգուտովի, հետեւաբար Դպրոց և Եկեղեցւոյն պէտքէրը հայթայթել և նոգալ՝ բաւականէն ծանր զըժուարութիւն մը եղաւ. բայց հետզհետէ Շիշիի հայ ըընակիչութեան բագմանալովը, հազիւ կարելի եղաւ, առանց բայ պարտք մը թողլով, որոշ պիւտճէով մը տնտեսել ու տուկը. բայց որովհետեւ բնակչաց անցամանը աղքատ ժողովարդին թւուն ալ բազմապատկուեցաւ և այս համեմատութեամբ ալ ջան ի գործ զրուեցաւ աշխատիլ հաստատուն եկամուտներու գոյութեան, ուր ուրիմն անցեալ տարուան շրջանին մէջ, զիստաւրաբար Եկեղեցւոյ քայքայման վիճակը նկատի առնելով կարելի եղաւ մասնաւոր աշխատութեան շնորհիւ Բարերար Զէնոր պէյ Մէրամէթձեամի հին Եկեղեցին ամբողջապէս ի համանէ վերաշներ : Ինչպէս նաեւ կարելի եղաւ արդէն գտնուած փուռի մը կէս մասը գնել և Եկեղեցւոյ պարագի մասին արտաքին կողմը 520 կան-

գուն պարապ հող մը գնել, որուն փոխարժէքին մէկ մասը ժամանակին յանուն Եկեղեցւոյ շինութեան գոյացած դրամէն և մնացած մասն ալ Եկեղեցւոյ մատուկէն վճարուած է, որուն վրայ :

Ինքնայօժար փափաքանօք վերջերս Բարերար Վսեմ. Զէնոր պէյ Մէրամէթձեամ բարեհաճեցաւ ի հիմանէ քարուկիր նոր Դպրոց մը ևս կառուցանել :

Սակայն նկասենով որ ո՛չ այս ժողովրդի անցամամբը և ո՛չ ալ թաղ. Խորհրդոյն աշխատութեամբը բաւական չպիտի ըլլայ ամսական 25 ոսկի անհըրաժեշտ եղած ծախուց գումարը պատրաստել և գործել, անոր համար ստիպուեցաւ սոյն ծանօթագրութեամբը դիմել աղնիւ թաղեցի ժողովրդեան նիւթական օժանդակութեանը, որ արդէն ի հուոց ի վերմեր ժողովուրդը բարոյական պարտաձանաշխատթեամբ աւանդական նուիրատուութեամբ, ողորմածամիրութեամբ միշտ օգնած և դիւրացուցած են թաղ. Խորհրդներու պաշտօնավարութիւնը ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյ և ի յառաջդիմութիւն կրթական գործին:

• Յուուալով որ պատ. թաղեցւոց օժանդակութիւնը մեզ պիտի նպաստէ իբր վստահութեան յայտարար նշան և կարգալով սոյն տպագրեալ յատակ և որոշ բաժանումներով գրուածները, չպիտի վարանի լնոյնուալ գործադրել Եկեղեցւոյն, դպրոցին և զաղաքացիական պարտականութիւնները, նոյնիսկ ի գիւրութիւն բարոյական գործառնութեանց : Այսու Խորհուրդոս իւր պաշտօնին մէջ թաղեցւոց կողմանէ հարկ եղած դիւրութիւնները գանելով, իբր վստահութեան առհաւատչեայ, պիտի աշխատի Եկեղեցւոյ և դպրոցի գործերուն օգտակար հանդիսանալ հետզհետէ :



ՄԿՐՏՈՒԹԻՒՆ


Քրիստոնէական պարտաւորութիւնը կը հրամայէ
մեզ երախայ մը գոնէ 8 օր վերջ անպատճառ եկեղեցի
քերել, մկրտել և անուանակոչել, ի բաց առեալ այն
մաքնաւոր պատճառները և պարագաները որ կը հար-
կադրեն ծնողները երկարել իրենց երախաներուն Մկրտ-
ութեան լորինուրդը, որուն համար հարկ եղած նիւ-
թական ծախուց փոխարինութիւնը հետեւեալ ցուցակով
կարգադրուած է .

ՅԱՅՑԱԳԻՐ ՄԿՐՏՈՒԹԻՒՆ

Պատօնեայք	Ա.		Բ.		Գ.		Դ.		Ե.	
	Ա.սն.									
Վարդապետ	2	100	1	40	1	30				
Քահանայ	4	120	3	75	2	40	2	30	1	15
Ժամարար		30		20		10				5
Դպիր	2	60	1	20	1	15				
Նուեր Եկեղեցւոյ		250		140		60		20		15
Մեղրամոմ		60		25		20		20		5
Լուսարար		20		15		12		10		5
Ժամակոչ		20		15		12		10		5
	660		350		200		100		50	

Մանօթ . — Ա . Անտէր և տաներէց քահանային կող-
մէ վկայեալ կարօտ ընտանեաց զաւակներուն մկրտու-
թիւնը ձրի կը կատարուի :

Բ . Ծննդեան վկայագիրներու համար բացէն տասը-
դրուշ կը դանձուի :






Տաներէց քահանային միջոցաւ երկուստեղ Պատրիարքանի՝ վերաբերեալ պատի հրամանագրի գործողութիւնները կատարելու կարգին, իւրաքանչւր թաղեցի, ըստ օրինի, իւրաւունք ունի իր բնակած թաղի թաղ. Խարհրդայ ստորագրութեամբ իր նիւթական վիճակը ձշել, որուն համաձայն պարտաւոր է այդ առթիւ եկեղեցւոյ մնալուկին վճարել գումար մը հետեւեալ ցուցակին համեմատ.

Ա. Բ. Դ. Պ. Դ. աստիճաններու համար ըստ հաճոյս

Ե.	>	>	30	դրուշ
Զ.	>	>	20	>
Է.	>	>	10	>
Ը.	>	>	9	դրի

Եկեղեցւոյ մէջ կատարուած հարմափներու ծախուց ցուցակը ձիշդ մկրտութեան ցուցակին համապատասխանն է և եթէ հարկ ըլլայ տան մէջ կատարել հարսանեկան արարողաւթիւնը այն առեն հոգեւորականաց վը ճարութէն դուրս Եկեղեցւոյ նուէր մը դրկել անհրաժեշտ է ինչդէս նաև Եկեղեցական զգեստուց փոխարէն մասնաւոր փոխարինութիւն մը ընել կարեւոր է:

Այս առթիւ աւելորդ չենք նկատեր յիշեցնել Պատրիարքութիւններին բաժին մըն ալ Եկեղեցւոյ հանել հարկ է. ուստի առներու մէջ կատարուած հարմափներու առեն Եկեղեցական զգեստուց գործածուած շորջաններուն և իր մօմագրին՝ նուէր մը զրկել անհրաժեշտ է Եկեղեցւոյս: Նոյնպէս հարսանեկան մօմերը Ա. Եկեղեցւոյս նուիրելու բարեհաճութիւնը կ'ակնկալէ Խորհարդս:



ՅԱՏՈՒԿ ՊԱՏԱՐԱԳ

Իրենց ննջեցելոց հոգւոյն հանգստին համար բարեպաշտ հաւատացեալներէն անոնք որ կը փափաքին մաս-

Նաւոր ու յատուկ Պատարագաւ մը վերյուշել իրենց սիրելիները , պարտաւոր են այն օրուան Եկեղեցւոյ արարողութեանց նույրատուոթեամբ մասնակցիլ . վառածած մօմերուն , ջաներուն և լուսաւորեալի ծախքը վճարելէն զատ , օրուան ժամարարին ըստ աստիճանի մասնաւոր ժամուց մը նույրել հարկ է նաև Եկեղեցւոյ բոլոր աշխատաւոր պաշտօնէից նույրներ տալ , յետագայ ցուցակին և Եկեղեցւոյ պայծառութեան համար մասնաւոր գումար մը տալ : Անշուշտ չի մոռցուիր արքաներուն ալ բաժին մը հանել : Պայման է նաև անպատճառ ժամարար քահանային հետ Ա . Պատարագէն յետոյ հանդուցելոյն գերեզմանին վրայ այգուց կատարել տալ և փոխարէնը օրհնող քահանան մխիթարել վճարմամբ մը :


ՅԱՅՏԱԳԻՐ ՅԱՏՈՒԿ ՊԱՏԱՐԱԳԻ

Պատօնինայք	Ա . Ասն .	Բ . Ասն .
Պատարագիչ Եպիսկոպոսի	216	
Քարոզիչ Վարդապետ	60	
Պատարագիչ Վարդապետ		108
Քահանայիք	4 120	2 50
Ժամարար		20
Դպրապետ		20
Ենուեր Եկեղեցւոյ		
Զահավառութիւն	209	204
Մեղրամօմ		
Լուսարար	20	15
Ժամակոչ	20	15
	700	432



ՆՆՁԵՑԵԱԼՆԵՐՈՒ ՅՈՒՂԱՐԿԱԽՈՐՈՒԹԻՒՆ

Քանիցս Պատրիարքարան է եկած պաշտօնական հրամաններու համաձայն , աւելորդ չենք նկատեր կրկնել հասարակութեան թէ առողջապահական օրինաց և մասնաւանդ Հայ . Եկեղեցւոյ կանոնայ վրայ սրոշուած է ննջեցեանները՝ առանց որևէ հանդիմառութեան , ուղղակի Եկեղեցի փոխարել և մայսն Եկեղեցւոյ մէջ կատարել կրօնական արարողութիւնները , որուն համար հարկ եղած նիւթական ծախուց Կորպագրութիւնը ճշշգուած ըլլալով , պիտի կատարուի ըստ հետեւեալ ցուցակին : (Տեսնել գրին Ետեւի ցուցակը)



Ծանօթ. — Ա. — Սոյն ցանկէն դուրս երբ աւելի Եպիսկոպոս, Վարդապետ, Քահանայ ևայլն ուղուի, այդ պաշտօնէից վճարեալ գումարին չափ գումառ մ՞ալ Ա. Եկեղեցւոյ մնուուկին համար կը գանձուի:

Բ. — Եթէ ննջեցեալը յառաջագոյն տունէն Եկեղեցի փոխադրուի, փոխադրող՝ քահանային համար զատ պատապան մը կը գանձուի:

Գ. — Կառքի և դադաղակրի ծախըները բացէն կը գանձուի ուղուած պարագային:

Դ. — Կառքի գիներն են տունէն Եկեղեցի փոխադրութիւն համար Ա. կառք՝ 120, Բ. կառք՝ 80, Գ. կառք՝ 40, Եկեղեցին գերեզման փոխադրութիւն համար Ա. կառք՝ 120, Բ. կառք՝ 80, Գ. կառք՝ 40. զրշ.:

Ե. — Դպիր տղայոց և Աղքատախնաժի նուելներն ըստ հաճոյից են:

Զ. — Բատ կանոնագրի Շիշի Աղդ, գերեզմանաւտան Յանձնաժողովոյ, ընդհ. գերեզմանաւտեղեաց համար (27) քան և եօթին զրուշ կը գանձուի, իսկ մասնաւոր գերեզմանաւտեղեաց համար, ննջեցելոց տիրոջ սեփական նած թարի աստիճանին համեմատ տուրք կը գանձուի:

Է. — Ժամակոչի համար իրը լուսողոչք զատ իրաւունք մը կը արուի:

Ը. — Անտէր և տաներէց քահանային կողմէ վկայեալ կարօտ ննջեցելոց թաղումը ձրի կատարուելով, ծախքերը Ա. Եկեղեցւոյ մնուուկին կը վճարուի:

Թ. — Յուղարկաւորութեանց ծախքը կանխիկ կը գանձուի:

Ժ. — Սոյն ցանկին մէջ նշանակուած գումարները վերջնական են և որևէ զեղչ չեն կրեր:

ՀՈԳԵԼԱՆԳԱՏԵԱՆ ՊԱՇՏՈՆ

Ննջեցելոց հոգւոյն հանգստի մի մասնաւոր արարողութիւն է նաև յետ Ս. Պատարաքի հոգեհանգստեան պաշտօն կատարել տալը որուն համար հարկ է գոնէ օր մը առաջ Թաղ. Խորհուրդին ծանուցանել և ըստ կամս փոխարինութիւնը ստանձնել, որուն նուազագոյն գինն է 60 զրուշ, հոգեորականներունը առանձին վճարելով:

ՎԱՐԺԱՐԱՆ

Թաղս՝ հակառակ իւր անձուկ վիճակին, ունի իւր յատուկ վարժարանը, բաղկացեալ մանկապարտէգէ և նախակրթարանէ, որոնց մէջ աւելի քան 150 երկսեռաշակերտ կը դաստիարակուին խնամեալ կրթութեամբ մը և երկսեռ պաշտօնէից միջոցաւ՝ մնայուն կամ այցելու: Բայց ծնողաց ամենամեծ մասին աղքատ ըլլալուն համար աշակերտներուն կէսէն աւելին արդէն ձրի են, որով մնացեալներէն ստացուած չնչիւ թոշակները ընդհանուր ծախքին հարիւրին տասն անգամ չեն հաներ. մնացեալ բացը պիտի գոցուի Եկեղեցւոց ընդհանուր հասոյթներով, անոր համար ամէն թաղեցիի պարտականութիւնն է այլեւայլ առիթներով խնդրուած նուժրատուութիւնները առատօրնէն ընկե, որպէս զի հնար ըլլայ ժամանակին պահանջներուն համաձայն վարժարանի մը մէջ աղքատիկ տղաքները դաստիարակել: Մասնաւորաբար կը ինդրենք բարեկեցիկ թաղեցիներէն, որոնք ամէն ջանք ու զոհողութիւն կ'ընեն իրենց զաւակաց բարւոք կրթութեան և գաստիարակութեան, այն համոզմամբ թէ անուս ու տգէտ մնալու դար չէ, մի քիչ մ՞ալ հանել բարեհաճին աղքատ ուսանողաց մտաւոր

զարգացման համար, որով ամենամեծ առաջինութիւնը գործած պիտի ըլլան մարդկութեան և Ազգին: Այս կէտք կը յանձնարարուի բարեկեցիկ ամուրի ազգայնոց խորին ուշադրութեան:

Ի Ւ Ղ Ա Գ Ի Ն

Հսուց ի վեր աւ անդական ու նուիրական սովորութիւն է Զատկի և Խնադեան առթիւ իւղագնի բարեպաշտիկ նուիրատութիւն մ'ընել Ս. Եկեղեցւոյ. որպէսզի կարելի ըլլայ հոգալ անոր նի թական բոլոր պէտքերը, ինչպէս և վարժարանը կանգուն ու հետզհետէ յառաջդիմութեան և զարգացման վրձակի մէջ պահել, մանաւանդ որ մեր Եկեղեցին ուրիշներու պէս անշարժ և հաստատուն կալուած է եկամուտ չունենալով, գըլխաւորապէս այդ երկու նշանաւոր տաղաւարներու առթիւ եղած իւղագնի նուէրներով կը հոգացուի իր ու վարժարանին տարեկան մատակարարութիւնը, ինչպէս և թաղիս կարօտներուն ու աղքատներուն կարելի օդ նութիւնը:

Ասոր համար ամէն Զատկի և Խնունդի յատուկ կոչ կ'ուղղուի բարեպաշտ թաղեցիներուն և այսուհետեւ ալ պիտի շարունակուի:

Վատան ենք թէ ժողովուրդն իւս քան զեւս առաւտարտութեամբ կը կատարէ իւր մինչեւ ցարդ այնքան սիրայօժար կերպով կատարած քաղցր պարտքը:

ԳԱՆՁԱՆԱԿԻ Շ ԶԱՐԵՐՈՒԹԻՒՆ

Թաղ. Խորհուրդս անհրաժեշտ պէտք մը համարած է ամէն կիւրակէ յատուկ գանձանակ մը պատցնել թաղիս մէջ, որովհետեւ Եկեղեցին մեկուսի տեղ մը գըտ-

նուիլը և ժողովրդեան մեծ մասին կիւրակէ և տօն օրերը Եկեղեցի չի գալը չառ դժուարացուցած է թաղային մատակարարութեան գործը: Արդէն այդ պատճառով ալ սովորական կիւրակէ օրերը Եկեղեցւոյ մէջ պնակ պատցնել զանդ առնուած է: Ուստի կը խնդրուի սիրայօժար և լիառատ կերպով մասնակցիկ գանձանակի նուիրատութեան թէ՛ տան մէջ ըլլայ, թէ՛ փողոցը:

ԲԱՐԵՊԱՇՏԱԿԱՆ ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՔ Ե Կ ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ԿՏԱԿԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ

Թաղիս Եկեղեցին պէտք եղածին չափ Եկեղեցական անօթներ ու զարդեր չունի, որոնք անհրաժեշտ են հուզեւոր արարողութեանց ու հանդիսակատարութեանց ուսափի մեծ չնորհակալութեամբ կ'ընդունուի բարեպաշտներու կողմանէ այդ կարգի նուիրատաւութիւններ, զոր օրինակ խաչ, կանթեղ, չուրչառ, գաւաղան, սկիչ, ծածկոց գորգ ևալին, որոնց նուիրատուներու աշնունները յատուկ տօմարի մէջ կ'արձանագրուին և տարուան մէջ մասնաւոր օրեր Պատարագ - կը մատուցաւի անոնց ննջեցելոց հոգւոյն և կենդանեաց արեւշատութեան ու գործոց յաջողութեան համար:

Նեեւ Եկեղեցիներու անունով կտակ ընել կամ յետ մահուան կալուած կտակեն ալ բարեպաշտիկ նուիրատուութեան տարբեր խիստ գործնական ձեւ մըն է. ուստի այդ մասին ալ ժողովրդեան ուշադրութիւնը կը հրաւիրեմք, մանաւանդ այնպիսիներու, որոնք օրինական ժառանգ չունենալով, յետ մահուան կալուածնին մանկիւ երթագու վտանգին տակ է: Մեղք է այդ պարագային չիշել և մոռնալ Ազգ. Եկեղեցին ու Դպրոցը



և անտարբեր մնալով, ձգել որ կալուածնին ի կորուստ
երթայ. այդպիսի կտակ ընել ուղղողները յիշելու են որ
նոյն օրինակ նույիրասութիւնք՝ միայն թաղ. Խոր-
հուրդով վերջանալիք գործ չէ, հապա պետական շարք
մը գործողութեանց կատարման կարոտ են, ուստի
այդպիսիները պարտաւոր են գոնէ առողջութեամբ խօ-
սելու վիճակին մէջ եղած ատեննին՝ օր առաջ իմացնել,
օրինական գործողութիւնները կատարելու համար: Նաև
կը յիշեցնենք թաղիս բարեկեցիկ ամուրի կամ անորդի:
ազգայիններուն թէ իրենց կալուածները Եկեղեցւոյս
կողմէ ներկայացուցած անձերու անուններու դարձնել,
եկամուտը ցկեանս առնելու և ի հարկին ուրիշն ծա-
խելու պայմանով: Այս մասին թաղ. Խորհուրդն ամէն
ապահովութիւն կրնայ տալ:

Կ Ա Լ Ո Ւ Ա Շ Ա Կ Ա Ն

Կալուածական գործողութեանց կատարման համար,
ամէն թաղեցի պարտաւոր է իրեն պատկանած թաղին
Եկեղեցւոյն գիմելով, սատանալ կալուածական վկայա-
գիր: Առ այդ վճարուելիք գումարները հետեւեալ ցու-
ցակին մէջ նշանակուած են:

ՍԱԿԱՑՈՅՑ

Կալուածական և այլ վկայագիրներու.
1. Կալուածական վկայագիրներ

Արժեք

ՊԲՀ.	ՊՐ.	ՄՊՐ.Ք	ԱՐՃ.ԹՂ.	ԳՈՒՄԱՐ
1—10,000.....	10	5	5	20 ՊՐ
10,000—20,000.....	15	5	5	25 >
20,000—40,000.....	25	10	5	40 >
40,001—65,000.....	30	20	5	55 >
65,001 Ըստ Վեր.....	50	20	5	75 >

2. Մնադեան, մահուան, ժառանգական վկայագիր-
ներ.

Խորագութիւր անհատի համար 20 ՊՐ.

Առանց բացառութեան միտարներու .. 5 >

Մասնօթ.

Ա. — Սոյն սակացոյցը գործադրելի է թէ՛ ֆէրադի,
թէ՛ վէֆաէն ֆէրադի թէ՛ ինթիգալի և թէ՛ թէվսիի
ինթիգալի գործողութիւններու և վկայագիրներու հա-
մար:

Բ. — Եթէ վաճառողք ի Խորհրդարան չի ներկայա-
նալով՝ պաշտօնեայ մը երթայ բնակատեղին և ի ներկա-
ութեան վկացից կալուածադիրն և Պատրիարքարանէ:
արուելիք տաճկերէն ծանուցագիրներն սաորագրել տայ,
բացի վկայագիրներու զինէն, պաշտօնէլն նուէր մը կը
արուի:

Գ. — Մնադեան, մահուան և ժառանգական վկա-
յագիրներու մէջ, երբ Քահանայի սաորագրութիւնն
պէտք լինի, բացի վկայագիրներու զինէն սաորագրող
Քահանային համար նուէր մը կը գանձուի:

Դ. — Վաւերացեալ ո և է զիր անվճար չի յանձ-
նուիր:

ՄՈՒԽՏԱՐՆԵՐՈՒ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ.

Հարկ չէ յիշեցնել թէ ամէն հասարակութիւն կամ
ամէն Ազգ իր կողմանէ օրէնքով մը կառավարութեան
և ժողովրդեան մէջ պատահած գործերու դիւրութեան
համար Մուխտար անունով պաշտօնեայ մը սահմանած է:

Ժողովրդը պիտառաբար ամիշական պէտք ունի
դիմելու սոյն պաշտօնեալին, կառավարութեան հետ
ունեցած գործերուն մասին իրմուխտագերի, թէղքէրէի
Օսմանիյէի, նուջեցելոց քարանթինայի, աեղափսու-

թեանց և այլ իլմուխապէրներ ստանալու համար : Նոյն պէս զինւորական գործողութեանց առթիւ հարկ անքաժեշտ է մուխտարին դիմել : Պէտք է գիտնալ թէ մուխտարին ամէն մէկ պաշտօնական գործողութեան համար զարկած կնիքին փոխարին (5) հինդ զրուշ պէտք է վճարել, բացի երթեւելի՝ ծախքերէն :

ՅՈՒՅԱԿ

ԵԿԵՂԵՑՈԿԱՆ ՀԻՆ ԳՈՅՉԵՐՈՒ

Մէկ իփէքի տամասկօ մեծ սեղանի համար վարագոյր՝ նուէր Գէորգ էֆէնտի Մարգարեանէ :

Երկու խորհրդանոցի և մէկ Տէր ողորմեափ բազէ վարագոյր՝ նուէր Տիկին Պարգև Ալլըճեանէ :

Մէկ հատ բնտիր ձեռաց Խաչ՝ նուէր տիկին Մէրսէտէն կ. Թահատապրունեանէ :

Մէկ ձեռք իփէկի՝ տամասկօէ ժամարարի զգեստ ամբողջութեամբ՝ նուէր Զարին էֆէնտի Տիգլուրէ :

Մէկ սէճճառտէ՝ նուէր բարեպաշտունի Տիկնոջ մը կողմէ :

Երկու պաֆօն փուովառ՝ նուէր Ներսէս էֆէնտի Փափագեանէ :

Մէկ խղաներկ ծննդեան պատկեր՝ նուէր Օննիկ էֆէնտի Տէրունեանէ :

Երկու հատ զոյգ մօմնոց ապակեայ աշտանակ՝ նուէր տիկին Նունիկ Ալալիմնեանէ :

Մէկ շալ վարագոյր Տէր ողորմեափ՝ նուէր տիկին Հերիգա Յ. Չըտանեանէ :

Մէկ արծաթեայ կանթեղ Աստուածածնալ պատկերի, տիկին Արմենունի Սէրվիչէնէ :

Մէկ գորգ և ապակեայ աշտանակ մը՝ նուէր Տիկին Մարիամ ձիվէլէկեանէ :

Երկու արոյրէ աշտանակ՝ նուէր Յովսէփ էֆէնտի Զարիփեանէ :

Մէկ գորգ սէճճառտէ՝ նուէր Զարմայր էֆէնտի ձըշմարտախոսեանէ, Զեռամբ Սարգիս էֆ. Ֆնտլլեանի :

Մէկ արծաթեայ Յարութիւն՝ թագումի համար, նուէր Սարգիս և Արամ էֆ. Հարենցէ :

Մեղանի վրայ դրուելիք գորգ մը՝ նուէր Բարեպաշտունի տիկնոջ մը կողմէ :

Արոյրէ մեծ աշտանակ մը՝ նուէր Յովհաննէս էֆ. Ուզունեանէ :

Երկու գորգ աշտանակ՝ նուէր Յարութիւն էֆէնտի Նահապետեանէ :

Գաւթի Աստուածածնայ պատկերին մէկ արծաթապատ շրջանակ, նուէր՝ տիկին Ելմոնիկ Պալեանէ :

Ս. Աստուածածնայ պատկեր մը երկու զիխաթագոլ՝ նուէր Յարութիւն էֆէնտի Ալվագեանէ :

Արոյրէ գեղին բարձրաւանդակ 5 մօմնոց աշտանակ մը, նուէր՝ Յովսէփ էֆէնտի Յարութիւնեանէ :

Երկու պաֆօն աշտանակ 4 մօմնոց՝ նուէր. Խաչիկ էֆէնտի Խօրասանճեանէ :

Մէկ գորգ՝ նուէր Սարգիս էֆ. Նաղեանէ :

Մէկ արծաթեայ զարգերով շապիկ՝ նուէր Վահմ. Զենոբ պէյ Մէրամէթճեանէ :

Մէկ գեղին անօթէ աշտանակ՝ նուէր տիկին Վերմին Թէրզեանէ :

8 Աշտանակով լահ մը՝ նուէր Տօքթ. Միհրան էֆ. Վարդազարեանէ :

Զոյգ մը գեղին աշտանակ՝ նուէր Էօւէնի Կէտէկանէ :

ՑՈՒՑԱԿ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՆՈՐ ԳՈՅՔԵՐՈՒԻ

Պատարագիչի ամբողջ զգեստ մը կարմիր սթօփա
կերպասէ նուէր՝ տիկին վիքթօռ Սիմօնօֆէ :

Խաշահանգիստի արժանըլաւ ապսէ մը՝ նուէր Տիկին Բիրանեանէ, ձեռամբ Յարութիւն էֆ. Այլազեանի :

Զոյգ մը փանոսաւոր աշտանակ, նուէր՝ Տիկին Աղաւնի Գօչունեանէ :

Երկու պարզ աշդանակ, նուէր՝ տիկին Ն. Փափազ-
եանէ :

Թանկագին պարսկական շալէ փորուրար շուրջառ
մը, նուէր՝ Տիկին Լիզիս Նշաստաճեանէ, ի յիշատակ
իւր հանգ. Դատեր Տիկին Կուսինա Յ. Փափազեանի :

Պաֆօն ճաճանչաւոր մեծ խաչ մը և երկու կերոն,
նուէր՝ Մաքսուտ էֆ. Շահպազէ :

Մէկ հովուական գաւաղան և մէկ վարդապետական
գաւաղանի գլուխ, նուէր՝ տիկին Աղապի Յ. Գարամտ-
ժեանէ, ի յիշատակ իւր ամուսնոյն :

Զոյգ մը պափօն քչոց ճաճանչաւոր, նուէր՝ Միհ-
րան էֆ. Ֆէսձեանէ ի յիշատակ իւր կողակցին :

Փոքր Աստուածանեայ պատկեր մը արծաթ շրջանակով,
և արծաթ թաքերով, նուէր՝ Օր. Սրբուհի Սիմօնովիչէ :

Արծաթեայ մշտավառ մեծ կանթեղ մը նուէր՝ Տի-
կին Արմենուհի Պալեանէ, ի յիշատակ իւր ամուսնոյն :

Մէկ շորջառ՝ նուէր՝ Կարագեա էֆ. Մարգարեա-
նէ, ի յիշատակ իւր Դատեր Օր. Բերուղիկի :

Երկու պղինձ աշտանակ՝ նուէր Տէր և Տիկին Գառ-
նիկ էֆ. Սալլրեսնէ :

Մէկ արծաթ իւղաման արծաթեայ պնակով, նուէր՝
բարեպաշտուհի տիկինով մը կողմէ :

Թանկագին գորգ մը, նուէր՝ Այրի Տիկին Կիւլիւն-
եա և իւր աղջիկները Օրք. Տիրուհի, Աղաւնի և Մաք-
րուհի Ելքէննեանէ ի յիշատակ հանգ. Տիգրան էֆ. Եէլ-
քէննեանի :

Վեց մօմնոց պղինձէ աշտանակ մը մէջ տեղը կան-
թեղով, նուէր՝ Տիկին Վերմին Գ. Գաղաննեանէ :

Արծաթեայ Ս. Ալին մը, նուէր՝ Պերճ և Հայկ էֆք.

Քէրրատէճեանէ ի յիշատակ իրենց ծնողաց :
Արծաթեայ ոսկեզօծ մշտավառ կանթեղ մը և Աստ-
ուածածնայ փոքր պատկեր մը՝ նուէր Տիրան պէյ Տատ-
եանէ :

Արծաթեապատ պափօն պնակ մը նուէր Միհրան էֆ.
ինատաճեանէ :

Ինը հատ բիւրեղեայ ոսկեզօծ զարդարուն կանթեղ
նուէր Միհրան էֆ. Մուրատեանի կողմէ :

Քարողիչ Եղիշիկ Ծ. Վրդ. Պապայեան

ԹԱՂ. ԽՈՐՃՈՒՐԴ Ս. ՎԱՐԴԱՆԱՆՑ ԵԿԵՂ. ՖԵՐԻ. ԳԻՒՂԻ

Ա. ՏԵՇ. Ե. Ա. Գ. Պ. Խ

Մարկոս Նարանեան

Գ. Ա. Ն. Զ. Ս. Պ. Խ

Լեւոն Նեառանեան

Ա. Ա. ՏԵՇ. Ա. Պ. Խ


Ջենօր Մերամերեան

Բ. Ա. ՏԵՇ. Ա. Պ. Խ

Պատկոր Պահերի

Ա. Կ. Պ. Ա. Մ. Ք

Լեւոն Արագանեան Միւլօն Խորայելեան



ՅԱՅԱԿԻ ՅՈՒՂԱԿԱՊՈՂԻՔԵՐՆ ՆԵԶԵՑԼՈՅ

ՊԱՀՏՈՆԵԱԾՔ	Ա. Առժնի. Առժնի. Առժնի.	Բ. Առժնի. Առժնի. Առժնի.	Գ. Առժնի. Առժնի. Առժնի.	Դ. Առժնի. Առժնի. Առժնի.	Ե. Առժնի. Առժնի. Առժնի.
Եսլիսկոպոս	1 . 120				
Վարդապետ	2 . 120	2 100	2 100	1 . 50	1 . 40
Քահանայի	10 300	8 200	6 150	6 150	4 . 80
Ժամանակ	50	40	30	25	15
Այլ	50	40	30	25	15
Տաղմեն Փախարութ Քահանայ					
Գերեզման » » »	40	30	25	20	15
Գրասելս	40	35	30	25	20
Մհձ Դպիրք	3 . 80	3 . 65	3 . 50	1 . 15	
Լուսաբար	30	25	25	20	15
Սօնականի	20	15	10	10	5
Խաչակիր	20	15	10	10	5
Ճամանակ	30	25	25	20	15
Գրագարակիրք					
Գրուցար	100	80	45	30	20
Շուշշան իւ շալիկ	70	50	30	30	10
Դազակ միսուկ	80	70	60	50	30
Նույր Եկեղեցւոյ	220	160	120	80	50
Մերսումօմ	120	90	60	40	25
Գլուխօմօմ	60	40	30	20	10
Զգես Դամարակաց	100	80	70	60	40
Համակառորիւն					
Կառ Տաղմեն Եկեղեցի					
» Եկեղեցին գերեզման					
Գերեզմանավոր եւ Արձանագր:					
Նույր Դպիրք Տղայոց					
Արբարսայնամ					
	1650	1460	900	680	420
					230
					130
					60



P. U.

No 6898

